



ԵՐԵՎԱՆԻ
ՍԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՍԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ

ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2019

2019թ. ԱՊՐԻԼԻ 26-ին մայրաքաղաքի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ ԵՄԱ ամենամյա մրցանակի հանձնման արարողությունը:

[ԵՄԱ ամենամյա մրցանակը](#) սահմանվել է 1998-ից և տրվում է Հայաստանի լավագույն լրագրողներին, ՋԼՄ-ներին և մեդիա-կազմակերպություններին:

2005 թվականին, 10 ամյակի առթիվ, ԵՄԱ վարչությունը ավանդույթ է ձևավորել՝ շնորհելու նաև անվանական մրցանակներ կյանքից անժամանակ հեռացած այն գործընկերների հիշատակին, որոնք կազմակերպության կայացման և զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել. Վալերի Այդինյան, [Տիգրան Նաղդալյան](#), [Ռուբեն Մանգասարյան](#), [Արմեն Նիկողոսյան](#):

2019թ. ԵՄԱ ամենամյա մրցանակաբաշխության արարողության ժամանակ հանձնվեցին նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ և Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի հատուկ մրցանակները:

ԵՄԱ ամենամյա մրցանակի 2017-2018թթ. դափնեկիրները

Արմեն Նիկողոսյանի անվան մրցանակ



Հասմիկ ԲԱԲԱՅԱՆ և **Գոհար ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**, Սպորտ-Մեդիամաքս նախագծի պատասխանատուներ՝ Մարզական իրադարձությունների օպերատիվ և որակյալ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Արմեն Նիկողոսյանի քույրը՝ Մարիաննա Նիկողոսյանը:

Վալերի Այդինյանի անվան մրցանակ



Մհեր ԱՐՇԱԿՅԱՆ, հրապարակախոս՝ Ինքնատիպ հրապարակախոսության համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ Մեսրոպ Հարությունյանը:

Տիգրան Նադայանի անվան մրցանակ



Նվեր ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, 1in.am կայքի մեկնաբան՝ Քաղաքական հարցազրույցի ժանրում մասնագիտական բարձր չափանիշների պահպանման համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ, գերմանական «Դոյչե Վելլե» մեդիա հոլդինգի հայաստանյան թղթակից Աշոտ Գազազյանը:

Ռուբեն Մանգասարյանի անվան մրցանակ



Նարեկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, լուսանկարիչ՝ Հանրային հնչեղություն ունեցող թեմաները Hetq.am կայքում յուրահատուկ դիտանկյունից ներկայացնելու համար: Մրցանակը հանձնեց Ռուբեն Մանգասարյանի եղբայրը՝ «Պատկեր» ստուդիայի տնօրեն Տիգրան Մանգասարյանը:

ԵՄԱ մրցանակ



Աննա ԳԻՎԱՐԳԻԶՅԱՆ, «ԺԱՄ» ամսագրի գլխավոր խմբագիր՝ Հայ մշակույթը օտարերկրյա լսարանին լավագույնս ներկայացնելու համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ փոխնախագահ Ավետ Դեմուրյանը:

ԵՄԱ մրցանակ



Նատալի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Թավշյա էսքիզներ» նախագծի հեղինակ և պրոդյուսեր՝ 2018թ. ապրիլյան քաղաքական իրադարձությունները մուլտիմեդիա միջոցներով ներկայացնելու համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ Էլինա Պողոսբեկյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



Անժելա ՄՏԵՓԱՆՅԱՆ, «ԱԼՏ» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր՝ համայնքային խնդիրների հետևողական և պրոֆեսիոնալ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



Գևորգ ԱՎՉՅԱՆ, ankakh.com կայքի թղթակից՝ Հայաստանում տարածքային կառավարման բարեփոխումների ընթացքը խորությամբ լուսաբանելու համար: Մրցանակը հանձնեց «Համայնք-ՀաՄաՏեղ» թերթի խմբագիր Արևհատ Գրիգորյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ



Հրայր ՊԱՊԻՆՅԱՆ, «Անկյուն+3» հեռուստաընկերության խմբագիր՝ Մարզային անցուդարձի օպերատիվ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման փոխնախագահ, «ՀաՄաՏեղ» ծրագրի ղեկավար Աբրահամ Արտաշեսյանը: